

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«05» նոյեմբեր 2020թ.

No 3901 - Լ

«ՅՈՒՆԻՏ (ԱՍԵՊՏ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «ՅՈՒՆԻՏ (ԱՍԵՊՏ)» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

«ՅՈՒՆԻՏ (ԱՍԵՊՏ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Յունիտ (ասեպտ)» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է անգույնից մինչև բաց դեղին գույնի, սպիրտի բնորոշ հոտով կամ բուրանյութի հոտով կամ առանց բուրանյութի հոտի, գործածության համար պատրաստի թափանցիկ հեղուկ: Որպես ազդող նյութ պարունակում է իզոպրոպիլ սպիրտ (պրոպանոլ-2)՝ 70%, ՉԱՄ-ի (չորրորդային ամոնիումային միացություններ) խառնուրդ՝ ալկիլդիմեթիլբենզիլամոնիումիքլորիդ, բենզէթոնիումի քլորիդ՝ 0,3% (գումարային), ինչպես նաև ֆունկցիոնալ բաղադրիչներ և բաղադրիչներ՝ նախատեսված ձեռքերի խնամքի համար: Միջոցի pH - $6.5 \pm 1,0$:

2. Միջոցը թողարկվում է.

1) Պոլիմերային սրվակներում՝ ցողման համար նախատեսված ամուր պտտվող գլխիկով՝ ցողացրման համար ծայրադիրներով կամ սերտ պտտվող կափարիչներով, 0,05-ից մինչև 1 դմ³ ծավալով:

2) 2-ից մինչև 200 դմ³ ծավալով պտտվող կափարիչներով պոլիմերային տարաներով:

3) Անհատական հերմետիկ բազմաշերտ փաթեթավորումով՝ ոչ գործվածքային նյութից, մանրէազերծ անձեռոցիկների ձևով՝ մեկ անձեռոցիկի վրա 1-10 գ միջոցի հաշվարկով, 40-60 գ/մ² խտությամբ, տարբեր չափսերի՝ 30×30 մմ-ից մինչև 200×200 մմ:

4) Խմբային հերմետիկ փաթեթավորումով՝ ոչ գործվածքային նյութից անձեռոցիկների ձևով՝ մեկ անձեռոցիկի վրա 3-10 գ միջոցի հաշվարկով, 40-60 գ/մ² խտությամբ, տարբեր չափսերի՝ 80×80 մմ-ից մինչև 200×200 մմ:

5) Պոլիմերային նյութից փաթեթում՝ 5-100 հատ, որն ունի մեկ անձեռոցիկ քաշելու համար փական:

6) 5-200 հատ անձեռոցիկների փաթեթ՝ անցքով, հերմետիկություն ապահովող փաթեթավորմամբ, 40-60 գ/մ³ խտությամբ, կափարիչով՝ մեկական անձեռոցիկների դուրս բերման նպատակով:

3. Միջոցը չի սառչում ընդհուպ մինչև -30°C:

4. Միջոցի պիտանելիության ժամկետը գործարանային փաթեթավորմամբ՝ (այդ թվում պոլիմերային տարան բացելուց հետո) 5 տարի է՝ տարայի հերմետիկությունը և միջոցի պահման պայմանները պահպանելու դեպքում:

5. Անձեռոցիկների պիտանելիության ժամկետը խմբային փաթեթավորման դեպքում բացվելուց հետո 30 օր է՝ սենյակային ջերմաստիճանում, ամուր փակվող փաթեթավորման պայմաններում:

6. Միջոցի կենսաբանական ակտիվությունը՝ միջոցն օժտված է հակամանրէային ազդեցությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների, այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլոզի հարուցչի (թեստավորված է *Mycobacterium terrae*-յի վրա) նկատմամբ, օժտված է նաև վիրուսասպան ակտիվությամբ (մարդու համար հայտնի բոլոր տեսակի հայտնի վիրուս-ախտածինների նկատմամբ, այդ թվում ընդերային և արտաընդերային հեպատիտների հարուցիչների՝ ներառյալ հեպատիտ Ա, Բ և Ց), ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի), սնկասպան հատկությամբ: Երկարատև հակամանրէային ազդեցությունը 3 ժամ է:

7. Թունաբանական ցուցանիշներ՝ միջոցն ըստ սուր թունավորության չափանիշների, ԳՕՍՏ 12.1.007-76-ին համապատասխան, ստամոքսի մեջ ներմուծելիս և մաշկի վրա ներգործությամբ պատկանում է քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին, որովայնի խոռոչ ներմուծելիս՝ գործնականում ոչ թունավոր նյութ է՝ 5-րդ դաս: Առաջարկվող ռեժիմներով կիրառելիս՝ տեղային գրգռող, մաշկի ռեզորբտիվ և սենսիբիլիզացնող ազդեցությունն արտահայտված չէ: Միջոցն օժտված է աչքի լորձաթաղանթի վրա չափավոր գրգռող ազդեցությամբ, ներշնչական (ինհալացիոն) ազդեցության ժամանակ միջոցի գոլորշիները քիչ վտանգավոր են, ըստ սուր թունավորության չափանիշների՝ 4-րդ դաս (շփման եղանակ կիրառելիս), գոլորշիների

խառնուրդի և աէրոզոլների տեսքով՝ չափավոր վտանգավոր, 3-րդ դաս (ռոզման եղանակ):

8. Սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) աշխատանքային գոտու օդում՝ պրոպանոլ-2-ի համար՝ 2-10 մգ/մ³, ՉԱՄ-ի համար՝ 1 մգ/մ³, 2 դասի վտանգավորություն (աէրոզոլ):

2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ

9. Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն)՝ հիվանդանոց, պոլիկլինիկա, առողջարան, վերականգնողական կենտրոն, ցերեկային ստացիոնար, բուժսանմաս և բուժկետ, ծերանոց և հաշմանդամների տուն-ինտերնատ, բժշկական և բժշկամանկաբարձական կետ, դիսպանսեր, հոսպիտալ, ատամնաբուժական կաբինետ, ծննդաբերական ստացիոնար, նորածինների պալատ, ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման բաժանմունք, վնասվածքաբանության, այրվածքաբանության բաժանմունք, օրգանների փոխպատվաստման կենտրոն, արյան փոխներարկման կենտրոն և շտապ օգնության կայան), կլինիկական, մանրէաբանական, իմունաբանական, ՊՇՌ և լաբորատորիաներում, մանկական և հանրակրթական կազմակերպություններում, մշակույթի և սպորտի կազմակերպություններում, քիմիկա-դեղագործական և օժանելիքակոսմետիկական արտադրության կազմակերպություններում, հանգստյան տներում, արդյունաբերական և հանրային սննդի կազմակերպություններում, բնակչության սպասարկման ոլորտի կազմակերպություններում, ինչպես նաև ազգաբնակչության կողմից՝ կենցաղում օգտագործելու համար:

10. Միջոցը գործածման համար պիտանի լուծույթ է, չի նոսրացվում և չի ակտիվացվում:

11. Միջոցը, պատրաստի հեղուկի ձևով որպես մաշկային հակասեպտիկ, կիրառվում է հետևյալ նպատակով.

ա) ձեռքերի հիգիենիկ մշակում,

բ) վիրաբույժների, վիրահատարանի բուժքույրերի, մանկաբարձների, վիրահատությունների, ծննդաբերությունների մասնակցող այլ անձանց ձեռքերի մշակում,

գ) արմնկափոսերի մաշկի մշակում՝ կաթետերների տեղադրումից և հողերի պունկցիայից առաջ:

գ) բժշկական կազմակերպություններում պացիենտի վիրահատական և ներարկման դաշտի մաշկի մշակում,

դ) ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում

զ) բժշկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների անձնակազմի կողմից օգտագործված բժշկական ձեռնոցների (լատեքսից, նեոպրենից, նիտրիլից և սպիրտի նկատմամբ կայունություն ունեցող այլ նյութերից), արյան կամ այլ արտազատուկներով աղտոտված ձեռնոցների մշակում՝ ձեռնոցների հանման ընթացքում ձեռքերի աղտոտումից խուսափելու նպատակով, ինչպես նաև մանրէազերծ արտադրատեսակներ թողարկող արտադրությունում, որտեղ պահանջվում է պահպանել ասեպտիկ պայմաններ, աշխատողների ձեռնոցների մշակում:

12. Միջոցը, որպես մաշկային հակասեպտիկ, անհատական փաթեթավորմամբ անձեռոցիկների ձևով, կիրառվում է հետևյալ նպատակով.

ա) ձեռքերի հիգիենիկ մշակում,

բ) վիրահատական դաշտի, դոնորի արմնափոսի մշակում,

գ) ներարկման, այդ թվում պատվաստման դաշտի մշակում.

դ) ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում

13. Միջոցը, որպես հակասեպտիկ, խմբային փաթեթավորմամբ անձեռոցիկների ձևով, կիրառվում է հետևյալ նպատակով.

ա) ձեռքերի հիգիենիկ մշակում,

բ) ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում:

14. Միջոցը կիրառման համար պատրաստի լուծույթի և անձեռոցիկների տեսքով կիրառվում է հրատապ ախտահանման նպատակով, շփման և ոռոգման եղանակներով, կիրառվում է հետևյալ օբյեկտների մշակման համար՝

1) սենքերում ոչ մեծ մակերեսներ (բազրիքներ, դռների բռնակներ և այլն), կահավորանքի պարագաներ, կոշտ և փափուկ կահույք (բժշկական սեղաններ՝ ծնարանի, բարուրման, վիրահատական, միջամտությունների, սեկցիոն, մերսման) գինեկոլոգիական բազկաթոռներ, անվասայլակներ, պատգարակներ, մահճակալներ, վերակենդանացման ներքնակներ, ատամնաբուժական աթոռներ),

- 2) բժշկական սարքերի և սարքավորումների մակերեսներ
 - 3) օպտիկական սարքեր և սարքավորումներ, որոնք թույլատրված են արտադրողի կողմից սպիրտային միջոցներով ախտահանման համար;
 - 4) ատամնաբուժական սարքավորումներ (արտաքին մակերեսներ, լարեր, փողրակներ);
 - 5) սրվակների կափարիչների մշակում ներարկումից առաջ
 - 6) հիվանդի խնամքի պարագաներ
 - 7) սանիտարատեխնիկական սարքավորումների առանձին մասեր (փողրակներ, ծորակներ, խառնիչներ)
 - 8) սոլյարիների խցիկներ, ուլտրամանուշակագույն լամպեր
 - 9) մանրէասպան լամպեր և լուսավորման այլ սարքեր
 - 10) ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր, սպորտային գույք
 - 11) կոշիկներ (սնկային հիվանդությունների կանխարգելում)
 - 12) գրասենյակային սարքավորումներ (հեռախոսներ, ստեղնաշարեր, էկրաններ և այլն):
15. Միջոցը մշակման համար կիրառվում է այն օբյեկտների համար, որոնք թույլատրված են արտադրողի կողմից 60-70% սպիրտ պարունակող ախտահանիչներով ախտահանման համար: Մշակումն իրականացնելուց առաջ անհրաժեշտ է հավաստիանալ նյութի մշակվող մակերեսի կայունության վերաբերյալ: Միջոցը չի կիրառվում ակրիլային ապակուց և լաքապատ մակերեսներով օբյեկտների մշակման համար:
16. Միջոցը կենցաղում կիրառվող հակասեպտիկ մակնշմանը համապատասխան կիրառվում է նաև բնակչության կողմից օգտագործման համար՝ ձեռքերի հիգիենիկ մշակման, ներարկման դաշտի, ոտնաթաթի կանխարգելիչ մշակման, ոչ մեծ տարածքների անհետաձգելի ախտահանման, ներարկումից առաջ սրվակի և ֆլակոնների կափարիչների մշակման համար:

3. ՄԻՋՈՑՈՎ ՏԱՐԲԵՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Ձեռքերի հիգիենիկ մշակում՝ ձեռքերի չոր դաստակների վրա (առանց օճառով ու ջրով նախապես լվանալու) լցվում է 3 մլ միջոց և շփվում է մաշկին ոչ պակաս 30 վայրկյան տևողությամբ՝ մինչև մաշկի ծածկույթի լրիվ չորանալը՝ հատուկ ուշադրություն դարձնելով եղնգափոսերի և միջմատային տարածությունների վրա:

18. Վիրաբույժների, վիրահատարանների բուժքույրերի, մանկաբարձների, վիրահատությունների, ծննդաբերությունների և մասնակցող այլ անձանց ձեռքերի մշակում՝ միջոցի կիրառումից առաջ ձեռքերի դաստակն ու նախաբազուկը նախապես մանրակրկիտ լվանում են հոսող տաք ջրով և օճառով՝ 2 րոպե տևողությամբ, որից հետո չորացնում են մանրէազերծ թանգիֆե անձեռոցիկով: Ապա ձեռքերի դաստակի վրա կրկնակի ավելացվում է 2,5 մլ-ական միջոց, շփում դաստակի և նախաբազկի մաշկին մինչև միջոցի լրիվ չորացումը՝ պահելով ձեռքերը խոնավ վիճակում առնվազն մեկ րոպե տևողությամբ, մաշկի ոչ բավարար խոնավության դեպքում ավելացվում է լրացուցիչ միջոց: Մանրէազերծ ձեռնոցներ հագնում են ձեռքերի լրիվ չորանալուց հետո:

19. Դոնորների արմնկափոսերի մշակում կաթետերիզացիայից և հոդերի պունկցիայից առաջ՝ մաշկը կրկնակի սրբվում է միջոցի առատ քանակությամբ թրջված մանրէազերծ թանգիֆե խծուծների միջոցով: Մշակման ավարտից հետո ազդեցության պահաժամը 1 րոպե է: Վիրահատության նախօրեին պացիենտը ցնցուղ (լոգանք) է ընդունում, փոխում է ներքնաշորերը:

20. Ներարկման, այդ թվում պատվաստման և այլ միջամտություններից առաջ մաշկի ամբողջականության խախտման հետ կապված դաշտի մշակում՝ մաշկը սրբվում է միջոցի առատ քանակությամբ թրջված մանրէազերծ բամբակե խծուծով: Մշակման ավարտից հետո ազդեցության պահաժամը 30 վայրկյան է: Ներարկման դաշտը ոռոգում են մինչև լրիվ խոնավեցումը՝ հետագա 30 վայրկյան պահաժամով:

21. Բուժանձնակազմի կողմից օգտագործված ձեռնոցների մշակում՝ ձեռնոցների արտաքին մակերեսը մանրակրկիտ սրբվում է մանրէազերծ բամբակե կամ թանգիֆե խծուծով՝ թրջված միջոցի առատ քանակությամբ (միջոցի ծախսի նորման 3մլ մեկ խծուծի համար), մշակման տևողությունն առնվազն 30 վայրկյան է (մինչև ձեռնոցի մակերեսի լրիվ չորացումը) մանրէային (բացի տուբերկուլոզից) վարակների դեպքում և առնվազն 3 րոպե՝ տուբերկուլոզի և վիրուսային վարակների դեպքում: Արյամբ և այլ արտազատուկներով ձեռնոցների աղտոտման դեպքում, ձեռքերի հետ դրանց շփումը

բացառելու նպատակով հանման ընթացքում մշակումը իրականացվում է երկու փուլով: Առաջին փուլում միջոցի առատ քանակությամբ թրջված բամբակե կամ թանգիֆե խծուծով ձեռնոցի մակերեսից հեռացվում է տեսանելի աղտոտվածությունը, ապա իրականացվում է մշակում համապատասխան ռեժիմով: Մշակումից հետո ձեռնոցները հանվում են ձեռքերից, ընկղմվում այդ նպատակի համար նախատեսված ախտահանիչ միջոցի մեջ և ուղարկվում օգտահանման, դրանից հետո իրականացվում է ձեռքերի հիգիենիկ մշակում:

22. Ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում՝ միջոցի առատ քանակությամբ (ոչ պակաս 3մլ) թրջված առանձին խծուծներով մանրամասն մշակվում են ոտնաթաթերը, յուրաքանչյուր ոտնաթաթը՝ առնվազն 30 վայրկյան:

23. Միջոցով տոգորված անձեռոցիկների, մանրէազերծ անձեռոցիկների կիրառումը որպես հականեխիչ՝ օգտագործելուց առաջ բացվում է փաթեթավորումը, հանվում անձեռոցիկը, անմիջապես իրականացվում է մաշկային ծածկույթների մշակում:

24. Ձեռքերի հիգիենիկ մշակում (անձեռոցիկներ անհատական փաթեթավորմամբ, անձեռոցիկներ խմբային փաթեթավորմամբ)՝ ձեռքի չոր դաստակը (առանց նախապես օճառով և ջրով լվանալու) մանրամասն սրբվում է անձեռոցիկով, հավասարաչափ խոնավեցնելով, հատուկ ուշադրություն դարձնելով եղնգափոսերի և միջմատային տարածությունների մշակմանը: Մշակման տևողությունը 30 վայրկյան է:

25. Վիրահատական դաշտի, դոնորի արմնկափոսի մշակում (անձեռոցիկներ առանձնացված փաթեթավորումով) Մաշկը մեկ ուղղությամբ կրկնակի սրբվում է երկու անձեռոցիկներով: Մշակման ավարտից հետո պահաժամը 1 րոպե է:

26. Ներարկման, այդ թվում պատվաստման և այլ միջամտություններից առաջ մաշկի ամբողջականության խախտման հետ կապված դաշտի մշակում՝ ներարկման վայրում մաշկը սրբվում է անձեռոցիկով մինչև լրիվ խոնավեցումը, մշակման ավարտից հետո պահաժամը 30 վայրկյան է:

27. Ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում (անձեռոցիկներ առանձնացված փաթեթավորմամբ, անձեռոցիկներ խմբային փաթեթավորմամբ)՝ մանրակրկիտ մշակում են յուրաքանչյուր ոտնաթաթի մաշկը առանձին անձեռոցիկներով, յուրաքանչյուր ոտնաթաթի մշակման տևողությունը առնվազն 30 վայրկյան է:

28. Սույն հրահանգի 15 կետում նշված օբյեկտները մշակում են գործածման պատրաստ լուծույթի կամ միջոցով թրջված 80X80 մմ-ից մինչև 200X200 մմ անձեռոցիկներով՝ աղյուսակ 1-ում նկարագրված ռեժիմներին համապատասխան:

29. Կենսաբանական հեղուկներով չաղտոտված մակերեսներ ու առարկաներ՝ մշակումն իրականացվում է շփման եղանակով՝ միջոցով տոգորված անձեռոցիկներով կամ ոռոգման եղանակով՝ ձեռքի ցողացրիչով հետագա շփումով: Ոռոգման եղանակով մշակելիս՝ 30 սմ հեռավորությունից միջոցով թրջում են մակերեսը հավասարաչափ, 30-40 մլ/մ² ծախսի նորմայով: Սպասում են նշված պահաժամը, չորանալուց հետո մակերեսները պիտանի են գործածման: Անհրաժեշտության դեպքում, եթե մշակվող մակերեսը հպվում է լորձաթաղանթին, ախտահանման պահաժամից հետո միջոցի մնացորդները հեռացնում են մակերեսից՝ լվանալով ջրով կամ չորացնելով թանգիֆե անձեռոցիկներով: Ոռոգման եղանակով մշակվող առավելագույն մակերեսը կազմում է ընդհանուր մակերեսի 1/10-ը: Ոռոգման և շփման եղանակներով մշակումն իրականացնում են մարդկանց ներկայությամբ, առանց անհատական պաշտպանության միջոցների: Միջոցը կիրառումից հետո սենքը չեն օդափոխում: Ոռոգման և շփման եղանակներով միջոցը կիրառում են միանվագ: Բորբոսով ախտահարված մակերեսները մշակում են երկու փուլով: Առաջին փուլում մակերեսը ոռոգում են միջոցով և խոզանակով իրականացնում են մեխանիկական մաքրում, որից հետո մակերեսը մշակում են միջոցով տոգորված անձեռոցիկով, ոռոգման և շփման եղանակներով: Մակերեսների վարակազերծման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 1-ում:

30. Կենսաբանական հեղուկներով աղտոտված մակերեսներ՝ մշակումն իրականացվում է երկու փուլով.

- 1) 1 փուլ՝ մաքրում, մակերեսը շփում են միջոցով տոգորված անձեռոցիկով կամ ոռոգման եղանակով մակերեսը թրջում են միջոցով, իսկ հետո մակերեսը շփում մաքուր անձեռոցիկով՝ աղտոտվածությունը մաքրելու նպատակով:
- 2) 2 փուլ՝ մաքրումից հետո մակերեսի ախտահանում, մակերեսը շփում են միջոցով տոգորված անձեռոցիկով կամ ոռոգման եղանակով մակերեսը թրջում են միջոցով, սպասում են պահանջվող պահաժամը:

31. Բժշկական արտադրատեսակների, սարքերի և սարքավորումների մակերեսներ՝ շնչառական, անզգայացման-շնչառական, ախտորոշիչ, ատամնաբուժական

սարքավորումների առանձին հանգույցները, բլոկները, մակերեսները, ինչպես նաև բժշկական սարքավորումների քանդվող մասերը և դետալները մշակում են շփման եղանակով: Ախտորոշիչ սարքավորումների տվիչները շփում են միջոցով տոգորված անձեռոցիկով, սպասում պահաժամը, սույն հրահանգի աղյուսակ 1-ի առաջարկներին համապատասխան: Ազդեցության պահաժամից հետո մշակվող մակերեսը սրբում են մանրէազերծ, թանգիֆե անձեռոցիկով՝ չսպասելով չորանալուն:

32. Սրվակներ (ֆլակոններ) ներարկումից առաջ՝ սրվակների վերին հատվածը (ֆլակոնների կափարիչները) սրբվում են միջոցի մեջ թրջված մանրէազերծ բամբակե խծուծով կամ անհատական փաթեթավորմամբ միջոցով տոգորված անձեռոցիկով: Մշակման ավարտից հետո պահաժամը 30 վայրկյան է:

33. Հիվանդի խնամքի պարագաներ, սանիտարատեխնիկական սարքավորման տարրեր՝ մշակում են միջոցով թրջած լաթով կամ անձեռոցիկով, շփման եղանակով:

34. Կոշկեղեն, ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր, սպորտային գույք՝ մշակում են շփման կամ ոռոգման եղանակներով, ցողելով միջոցը մինչև մակերեսի լրիվ թրջվելը՝ առնվազն 1 րոպե:

35. Գրասենյակային տեխնիկա (հեռախոս, ստեղնաշար, մոնիտոր և այլն) շփում են միջոցով տոգորված անձեռոցիկով, պահում են մակերեսին 30 վայրկյան: Անհրաժեշտության դեպքում մակերեսը շփում են մաքուր, չոր անձեռոցիկներով:

Աղյուսակ 1

Միջոցով մակերեսների և օբյեկտների ախտահանման ռեժիմները

Մշակվող օբյեկտը	Վարակի տեսակը	Ազդեցության ժամանակը, րոպե	Մշակման եղանակը
Սենքերի մակերեսներ, կահավորանքի առարկաներ, սարքեր, սարքավորումներ, գործիքներ	Մանրէային (տուբերկուլոզից բացի), ՆՀՎ	0,5	Շփում կամ ոռոգում
	Սնկային ¹	1	Շփում

Հիվանդի խնամքի պարագաներ	Վիրուսային	3	Շփում
Սանիտարատեխնիկական սարքավորման տարրեր	Տուբերկուլոզ	3	Շփում
Տվիչներ և ախտորոշիչ սարքավորումներ			
Օպտիկական գործիքներ			

Նշում՝ ¹ կանդիդա, տրիխոֆիտոն սնկեր, բորբոսասնկեր:

4. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

36. Միջոցը կիրառվում է միայն արտաքին օգտագործման նպատակով: Ներքին ընդունման համար չի կիրառվում:

37. Չի լցվում վերքերի և լորձաթաղանթների վրա:

38. Խուսափում են աչքի մեջ, վնասված մաշկի վրա թափանցելուց:

39. Միջոցը կիրառվում է անմիջապես արտադրողի գործարանային փաթեթավորմամբ: Միջոցը ջրով կամ այլ լուծիչներով չի նոսրացվում, ինչպես նաև այլ միջոցների հետ չի խառնվում:

40. Մակերեսների և օբյեկտների մշակումն իրականացվում է պացիենտների ներկայությամբ: Միջոցն անվնաս է մանկական հաստատությունների, ինչպես նաև նորածնային բաժանմունքների օբյեկտների մշակման համար:

41. Միջոցը շուտ բռնկվում է: Բացառում են միջոցի շփումը բաց կրակի, ներառյալ տաքացնող սարքավորումների հետ, միջոցով աշխատելիս չեն ծխում:

42. Միջոցը պահպանվում է դեղամիջոցներից հեռու, երեխաներին անհասանելի վայրում:

43. Գործածման ժամկետի լրանալուց հետո միջոցի կիրառումն արգելվում է:

44. Անձեռոցիկները նախատեսված են մեկանգամյա օգտագործման համար: Դրանց կրկնակի օգտագործումն արգելվում է: Անձեռոցիկների ոչ ճիշտ պահպանման հետևանքով չորացման դեպքում դրանց օգտագործումն արգելվում է:

5. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

45. Աչքերի մեջ լցվելու դեպքում՝ աչքերը լվանում են հոսող ջրի տակ և կաթեցնում 1-2 կաթիլ սուլֆացիլ նատրիումի 30% լուծույթ:

46. Մաշկի գրգռման կամ ցանի դեպքում միջոցի օգտագործումը դադարեցնում են: Ձեռքերը լվանում են օճառաջրով:

47. Շնչառական օրգանների գրգռման դեպքում ընդհատում են միջոցի հետ աշխատանքը, տուժածին անմիջապես դուրս են բերում մաքուր օդի կամ այլ տարածք, տվյալ տարածքը օդափոխում են, խմացնում են տաք ըմպելիք, բերանը և քիթը ողողում են ջրով, անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի:

48. Միջոցը ստամոքսի մեջ պատահական ընկնելու դեպքում սենյակային ջերմաստիճանի ջրով ստամոքսը լվանում են միջոցով և առաջացնում փսխում: Ապա տուժածին խմացնում են մի քանի բաժակ ջուր ադսորբենտի ավելացմամբ (10-15 հաբ մանրացված ակտիվացված ածուխ մեկ բաժակին):

6. ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

49. Հեղուկ վիճակում գտնվող միջոցի փոխադրումն իրականացվում է ցամաքային և ջրային տրանսպորտով՝ դյուրավառ հեղուկների փոխադրման կանոնների համաձայն, որոնք ապահովում են միջոցի և տարայի չվնասվելը:

50. Անձեռոցիկների ձևով միջոցի փոխադրումն իրականացվում է տրանսպորտի բոլոր տեսակներով, որոնք ապահովում են մթնոլորտային տեղումներից և արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանություն, բեռների փոխադրման կանոնների համաձայն, որոնք ապահովում են միջոցի և տարայի չվնասվելը:

51. Վթարային իրավիճակում, միջոցի մեծ քանակության պատահական արտահոսքի դեպքում թափված տեղում լցնում են ավազ, հող կամ սիլիկազել (չեն կիրառվում դյուրավառ նյութեր, օրինակ տաշեղներ, թեփ) ապա հավաքում են կափարիչով տարաների մեջ հետագա օգտահանման նպատակով: Մնացորդները լվանում են մեծ քանակության ջրով: Միջոցի մեծ քանակության մաքրման ընթացքում կիրառում են անհատական պաշտպանության միջոցներ՝ հագուստ, ճտքակոշիկներ, ռետինե կամ պոլիէթիլենային ձեռնոցներ, ունիվերսալ РПГ-67 կամ «А» պատրոնով РУ-60М

շնչադիմակներ կամ արտադրական հակագազեր: Աղտոտված տարածքը մաքրելուց հետո լվանում են մեծ քանակության ջրով:

52. Վթարային իրավիճակներում փաթեթավորման ամբողջականության խախտման դեպքում անձեռոցիկները հավաքում և օգտահանում են:

53. Արտաքին միջավայրի պաշտպանության միջոցառումներ՝ չի թույլատրվում չնոսրացված միջոցի թափանցումը մակերեսային և ստորգետնյա աղբյուրներ, կոյուղու մեջ: Նոսրացումն իրականացվում է ջրի մեծ քանակությամբ:

54. Հեղուկ վիճակում գտնվող միջոցը պահպանվում է փակ օդափոխվող պահեստային կառուցահատվածներում, արտադրողի փակ փաթեթավորմամբ՝ դյուրավառ հեղուկների պահպանման պայմաններին համապատասխան՝ դեղորայքից առանձին, երեխաներից հեռու վայրերում, -20°C -ից մինչև $+30^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում, տաքացուցիչ սարքերից և արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված տեղերում:

55. Անձեռոցիկների տեսքով միջոցի պահպանումն իրականացվում է փակ, չոր օդափոխվող պահեստային կառուցահատվածներում, պաշտպանված խոնավությունից և արևի ճառագայթներից, տաքացուցիչ սարքերից և բաց կրակից հեռու՝ -20°C -ից մինչև $+30^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում:

56. Արտադրողի կողմից փաթեթավորված վիճակում միջոցի պահպանման ժամկետը (այդ թվում տարան բացելուց հետո) 5 տարի է՝ հերմետիկ փաթեթավորման և պահպանման պայմանների պահպանման դեպքում:

7. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ ՄԵԹՈԴՆԵՐ

57. Կիրառման համար պատրաստի հեղուկի կամ անձեռոցիկների ձևով միջոցի որակի հսկման ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 2,3-ում:

Աղյուսակ 2

Միջոցի որակի ցուցանիշներ

(թողարկման ձևը՝ օգտագործման համար պատրաստի հեղուկ)

Ցուցանիշ	Նորմա
Արտաքին տեսք, գույն և հոտ	Անգույնից մինչև բաց դեղին գույնի, սպիրտի բնորոշ հոտով կամ բուրանյութի հոտով կամ

	առանց բուրանյութի հոտի թափանցիկ հեղուկ
Խտությունը 20°C ջերմաստիճանում, գ/սմ ³	0,860±0,020
Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	6,5±1,0
պրոպանոլ-2 –ի զանգվածային բաժին, %	70,0±5,0
ՉԱՄ-ի զանգվածային բաժինը (ալկիլդիմերիլբենզիլամոնիումիքլորիդ, բենզլեթոնիումի քլորիդ), գումարային, %	0,3±0,03

Աղյուսակ 3

Միջոցի որակի ցուցանիշներ

(արտադրության տեսակ՝ միջոցով թրջված անձեռոցիկ)

Ցուցանիշ	Նորմա
Արտաքին տեսք	Սպիտակ, ոչ գործվածքային նյութից խոնավ անձեռոցիկ,
Հոտ	սպիրտի կամ սպիրտի և բուրանյութի հոտ
Անձեռոցիկում տողորված լուծույթի զանգվածը, գ	8,6±0,8 4,3±0,4 3,0±0,3 1,1±0,1
պրոպանոլ-2 –ի զանգվածային բաժին, %	70,0±5,0
ՉԱՄ-ի զանգվածային բաժինը (ալկիլդիմերիլբենզիլամոնիումիքլորիդ, բենզլեթոնիումի քլորիդ), գումարային, %	0,3±0,03

58. Միջոցի արտաքին տեսքն ու գույնը որոշում են ակնադիտորեն, անգույն ապակուց փորձանոթի մեջ լցնում են միջոցը մինչև կեսը և դիտում են արտացոլված կամ անցողիկ լույսի տակ, հոտը որոշում են օրգանոլեպտիկ մեթոդով:

59. Անձեռոցիկի արտաքին տեսքն ու գույնը որոշում են ակնադիտորեն, հոտը որոշում են օրգանոլեպտիկ մեթոդով:

60. Տոգորված լուծույթի զանգվածի որոշում:

1) Սարքավորումներ, ռեակտիվներ և նյութեր.

ա. ընդհանուր նշանակության 2-րդ դասի լաբորատոր կշեռք՝ ԳՕՍՏ 53228 առավելագույնը 200 գ քաշի որոշմամբ

բ. բյուքս CB 34/12 ըստ ԳՕՍՏ 25336-82

գ. ունելի

դ. $50 \pm 5^\circ\text{C}$ ջերմաստիճանի միջակայքի պահպանումն ապահովող էլեկտրական չորացնող պահարան:

2) Փորձարկման իրականացում.

ա. Փաթեթը բացելուց անմիջապես հետո անձեռոցիկն ունելիով հանում են տուփից և տեղադրում նախապես կշռած բյուքսի մեջ, որոշում են անձեռոցիկով բյուքսի զանգվածը:

Անձեռոցիկն օդում, ապա նաև չորացնող պահարանում՝ $50 \pm 5^\circ\text{C}$ ջերմաստիճանի պայմաններում չորացնում են մինչև մշտական զանգված և կշռում են նույն բյուքսի մեջ: Կշռման ճշգրտությունը՝ մինչև 0.01 գ:

բ. Տոգորված լուծույթի զանգվածը (M) որոշում են բանաձևով.

$$M = m_1 - m_2, \text{ որտեղ}$$

M – տոգորված լուծույթի զանգված, գ,

m_1 – չչորացրած անձեռոցիկով բյուքսի զանգված, գ,

m_2 – չորացրած անձեռոցիկով բյուքսի զանգված, գ:

Որպես հետազոտության արդյունք ընդունում են 5 անձեռոցիկների փորձարկումների արդյունքների միջինը, որոնց միջև բացարձակ տարբերությունները չեն գերազանցում թույլատրելի տարբերությունը:

61. Խտությունը 20°C ջերմաստիճանում որոշում են համաձայն ԳՕՍՏ 18995.1.

62. Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշի (pH) որոշումն իրականացվում է պոտենցիոմետրիկ մեթոդով՝ ըստ ԳՕՍՏ 50550-ի:

63. Պրոպանոլ-2-ի զանգվածային բաժնի որոշում

1) Սարքավորումներ, նյութեր և ռեակտիվներ.

ա. գազային քրոմատոգրաֆ զանգված-սելեկտիվ դետեկտորով (քրոմատոմասս-սպեկտրոմետր "Perkin Elmer TurboMass Autosystem XL"),

բ. կապիլյարային սյունակ PE-35MS (անշարժ ֆազա (35 % ֆենիլ)-մեթիլպոլիսիլօքսան) 60 մ երկարությամբ, 0,25 մմ ներքին տրամագծով, 0,25 մկմ ֆազայի շերտի հաստությամբ,

գ. միկրոններարկիչ $1 \cdot 10^{-2}$ սմ³ (10 մկլ) տարողությամբ՝ $0.2 \cdot 10^{-3}$ սմ³ (0.2 մկլ) բաժանքի արժեքով,

դ. կրիչ գազ գազահեղուկային քրոմատոգրաֆիայի համար՝ «հատուկ մաքուր» («очы») ըստ ТУ 51-940-80,

ե. իզոպրոպիլային սպիրտ, մաքրությունը որոշվում է քրոմատագրորեն,

զ. պրոպիլային սպիրտ ըստ ТУ 6-09-4344-77, մաքրությունը որոշվում է քրոմատագրորեն՝ ներքին չափանմուշ (էտալոն),

է. լաբորատոր կշեռք 0.2 մգ կշռման ճշգրտությամբ:

Թույլատրվում է կիրառել համանման տեխնիկական հատկանիշներով սարքավորումներ, ինչպես նաև ռեակտիվներ՝ նշվածից ոչ ցածր որակով:

2) Հետազոտության նախապատրաստում:

ա. Ստուգաճշտման հարաբերական գործակցի (K) որոշման համար նմուշը պատրաստում են հետևյալ կերպ. կշռում են 1-2 գ իզոպրոպիլային սպիրտ հղկված խցանով փորձանոթի մեջ և դրան ավելացնում են պրոպիլային սպիրտի (էտալոն) մոտավորապես հավասար քանակություն: Կշռման արդյունքները գրառներով գրանցում են մինչև չորրորդ տասնորդական նշանը:

բ. Իզոպրոպիլ սպիրտի զանգվածային բաժնի որոշման համար միջոցի նմուշը պատրաստում են նմանատիպ կերպով, հետազոտվող նմուշին ավելացնելով պրոպիլային սպիրտ (էտալոն)՝ որոշվող բաղադրիչին (այսինքն ~15%) մոտավորապես հավասար քանակությամբ:

3) Հետազոտության իրականացում.

ա. Քրոմատոգրաֆի աշխատանքի պայմանները.

Ինժեկտորի ջերմաստիճան՝ 260°C,

կրիչ գազի հոսքի արագություն՝ 1 մլ/րոպե

թերմոստատի ջերմաստիճան՝ 50°C (թույլատրվում է կիրառել թերմոստատի ջերմաստիճան մինչև 100°C ներառյալ՝ իզոթերմիկ ռեժիմում առանց կրիչ գազի հոսքի արագության փոփոխության),

հոսքի բաժանում՝ 1:50,

նմուշի զանգված, սմ³՝ $0,1 \cdot 10^{-3} - 0,3 \cdot 10^{-3}$

բ. Դետեկտորի աշխատանքային պայմաններ.

իոնիզացիա՝ էլեկտրոնային հարված

սկանավորում՝ ընդհանուր իոնային հոսք

սկանավորվող զանգվածների միջակայք՝ 12 – 300 դալտոն,

ինտերֆեյսի ջերմաստիճան՝ 290°C

աղբյուրի ջերմաստիճան՝ 210°C

Ֆոտոբազմապատկչի վրա լարումը հաստատվում է ավտոմատ կերպով, զանգված–դետեկտորի ստուգաճշտման ժամանակ:

գ. Ստուգաճշտման գործակցի որոշման համար պատրաստում են երկու արհեստական խառնուրդ (կետ 73.2.1) և յուրաքանչյուրը 10 անգամ ենթարկում քրոմատոգրաֆիայի:

դ. Փորձարկման իրականացման համար պատրաստում են հետազոտվող ձևնմուշի երկու նմուշ (կետ 73.2.2) և յուրաքանչյուրը ենթարկում քրոմատոգրաֆիայի 3 անգամ:

4) Արդյունքների մշակում.

ա. Իզոպրոպիլ սպիրտի զանգվածային բաժինը (C) տոկոսներով «ներքին ստանդարտի (էտալոնի)» մեթոդով հաշվարկում են բանաձևով.

$$C = \frac{m_{\text{էտ}} \cdot S \cdot K}{m \cdot S_{\text{էտ}}} \cdot 100\% \quad , \text{ որտեղ}$$

m – հետազոտվող նմուշի զանգվածն է, գ,

$m_{\text{էտ}}$ – ներքին էտալոնի զանգվածն է՝ հաշվի առնելով մաքրությունը, գ,

S – իզոպրոպիլ սպիրտի գագաթի մակերես,

$S_{\text{էտ}}$ – ներքին էտալոնի գագաթի մակերես,

K – ստուգաչափման հարաբերական ցուցանիշ, որը հաշվարկվում է բանաձևով.

$$K = \frac{m_1 \cdot S_{\text{էտ}}}{S \cdot m_{\text{էտ}}}, \text{ որտեղ.}$$

m_1 – իզոպրոպիլ սպիրտի զանգվածն է՝ հաշվի առնելով մաքրությունը, գ:

բ. Ստուգաճշտման հարաբերական գործակցի կողմնորոշիչ ցուցանիշը զանգված-սելեկտիվ դետեկտորի համար կազմում է 1,2:

գ. Հարաբերական ստուգաչափման գործակցի որոշման արդյունքների միջեւ թույլատրելի տարբերությունը չպետք է գերազանցի 0.1-ը:

դ. «Ներքին ստանդարտի (էտալոնի)» զանգվածային բաժինը 5-30 % է՝ կախված վերլուծվող նմուշում իզոպրոպիլային սպիրտի պարունակությունից:

Որպես վերջնական արդյունք ընդունում են երկու զուգահեռ արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև թույլատրելի տարբերությունը չի գերազանցում 10%:

64. ՉԱՄ (ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ, բենզլեթոնիումի քլորիդ) զանգվածային մասի (գումարային) որոշում:

1) Սարքավորումներ, նյութեր և ռեակտիվներ

ա. ընդհանուր նշանակության 2-րդ դասի լաբորատոր կշեռք՝ ԳՕՍՍ 53228 առավելագույնը 200 գ քաշի որոշմամբ

բ. բյուրետ 1-3-2-25-0.1,

գ. հղկած կափարիչով կոնաձև փորձանոթ Кн 1-250-24/29 տիպի՝ ըստ ԳՕՍՍ 25336,

դ. Ծծմբական թթու ըստ ԳՕՍՍ 4204,

ե. քլորոֆորմ՝ ըստ ԳՕՍՍ 20015,

զ. Նատրիումի դոդեցիլսուլֆատ ըստ ТУ 6-09-25-40, 0.004Ն ջրային լուծույթ,

է. Նատրիումի սուլֆատ տասջրային, հ.հ.մ. ըստ ԳՕՍՍ 4171,

ը. Մեթիլենային երկնագույն ըստ ТУ 6-09-29,

թ. ցետիլպիրիդինիումի քլորիդ 1-ջրային՝ «Մերկ» (Գերմանիա) կազմակերպության արտադրության, հիմնական նյութի առնվազն 99% պարունակությամբ կամ համանման որակավորման ռեակտիվ ըստ գործող նորմատիվային փաստաթղթերի, 0.004 Ն ջրային լուծույթ,

ժ. Թորած ջուր՝ ըստ ԳՕՍՍ 6709 (այնուհետև՝ ջուր):

65. Հետազոտության նախապատրաստում: Ինդիկատորի, ցետիլպիրիդինիումի քլորիդի և նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթների պատրաստում.

1) Ինդիկատորի լուծույթի պատրաստման համար 1 դմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են 30 սմ³ մեթիլեն կապույտի 0,1% ջրային լուծույթ, 7,0 սմ³ խտացրած

ծծմբական թթու, 110 գ նատրիումի սուլֆատ տասջրանոց և ծավալը թորած ջրով հասցնում են մինչև 1 դմ³:

2) ցետիլալիլիդինիումի քլորիդի 0,004Ն լուծույթը պատրաստում են 100 սմ³ տարողությամբ փորձանոթի մեջ թորած ջրում մինչև 0,0002 գ ճշգրտությամբ վերցված ցետիլալիլիդինիումի քլորիդի 1-ջրային 0,143 գ կշռուկի լուծմամբ և ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ,

3) նատրիումի դոդեցիլսուլֆատի 0,004Ն լուծույթը պատրաստում են 100 սմ³ տարողությամբ փորձանոթի մեջ թորած ջրում նատրիումի դոդեցիլսուլֆատի 0,116 գ կշռվածքի լուծմամբ և ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ:

66. Նատրիումի դոդեցիլսուլֆատի 0,004Ն լուծույթի շտկիչ գործակցի որոշում: 250 սմ³ տարողությամբ հղկած խցանով կոնաձև կոլբայի մեջ 10 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթին ավելացնում են 40 սմ³ թորած ջուր, ապա 20 սմ³ ինդիկատորի լուծույթ և 15 սմ³ քլորոֆորմ: Առաջացած երկֆազ համակարգը տիտրում են ցետիլալիլիդինիումի քլորիդի լուծույթով՝ փակ կափարիչով փորձանոթի ինտենսիվ թափահարմամբ, մինչև ներքևի քլորոֆորմային շերտի գունազրկումը: Տիտրումն իրականացնում են ցերեկային լուսավորության ներքո: Երկֆազ համակարգի գույնը որոշում են անցողիկ լույսի տակ:

1) Հետազոտության իրականացում: 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ մինչև 0,0002 գ ճշգրտությամբ վերցված հետազոտվող նմուշի 8,0-ից մինչև 10,0 գ կշռվածքը լուծում են թորած ջրում՝ ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ: 250 սմ³ տարողությամբ հղկած խցանով կոնաձև կոլբայի մեջ լցնում են 2 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթ, ավելացնում են 45 սմ³ թորած ջուր, 20 սմ³ ինդիկատորի լուծույթ և 15 սմ³ քլորոֆորմ: Թափահարման արդյունքում առաջանում է երկֆազ համակարգ՝ կապույտ գույտ ներկված ներքևի քլորոֆորմային շերտով: Այն տիտրում են միջոցի պատրաստի լուծույթով՝ փակ կափարիչով փորձանոթն ինտենսիվ թափահարելով, մինչև ներքևի քլորոֆորմային շերտի գունազրկումը: Տիտրումն իրականացնում են ցերեկային լուսավորության ներքո: Երկֆազ համակարգի գույնը որոշում են անցողիկ լույսի տակ:

2) Արդյունքների մշակում: ՉԱՄ զանգվածային բաժինը (X) տոկոսներով որոշում են հետևյալ բանաձևով.

$$X = \frac{0.00160 \cdot V \cdot K \cdot 100}{V_1 \cdot m} \cdot 100,$$

Որտեղ 0.00160 – ակիլիդիմեթիլբենզիլ- ամոնիումի քլորիդի և բենզեթոնիումի քլորիդի միջին զանգվածն է, որը համապատասխանում է նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի 1 սմ³ -ին, 0.004Ն, գ

V – C(C₁₂H₂₅SO₄Na)=0.004 մոլ/դմ³ (0.004Ն) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի տիտրվող լուծույթի ծավալ, 2 սմ³,

K – C(C₁₂H₂₅SO₄Na)=0.004 մոլ/դմ³ (0.004Ն) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի տիտրվող լուծույթի շտկիչ գործակից,

100 – հետազոտվող նմուշի նոսրացման գործակից,

V₁ – միջոցի լուծույթի ծավալ, որը ծախսվել է տիտրման ժամանակ, սմ³, m – հետազոտվող նմուշի զանգված, գ:

67. Որպես հետազոտության արդյունք ընդունում են երեք զուգահեռ որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունը չի գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0.3%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է ±4,0%՝ p=0.95 հավանականության վստահելի միջակայքում: